

ՀՈՒՆԱՐԵՆ ΧΑΡΙΤΕΣ – ՀԱՅԵՐԵՆ ՁԻՐՔ

ԾՈՎԻՆԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Քարիտները՝ հմայքի ու գրավչության դիցուհիները, հունական դիցաբանության այն կերպարներից են, որոնք շատ չեն երևում գործողություններում, բայց որոնց հետքն այնքան խորն է հունական հնագույն պաշտամունքում, որ բազմաթիվ արտահայտություններ է գտել թե՛ բուն հունական և թե՛ հետագա եվրոպամետ կերպարվեստում¹:

Ըստ Հեսիոդոսի (Թեոգոնիա 907)՝ Քարիտները հայր աստված Չևսի և օվկիանուհի Էվրինոմայի երեք դուստրերն են՝ Էվիրոսիենն՝ տոնական խնդության, Ագլայան՝ տոնական շող ու փայլի, և Թալիան՝ ծաղկուն երջանկության դիցուհիներ: Նրանց բնակավայրը երկինքն է՝ Օլիմպոս լեռան գագաթը, ընկերուհիները՝ Մուսաներն ու Հորաները, պաշտոնը՝ սիրո և գեղեցկության աստվածուհի Ափրոդիտեին, պերճախոսության դիցուհի Պեթթյին և հանրահայտ Հերմեսին ուղեկցելը, քանի որ գրավչությունն ու հմայքն այդ օլիմպացիների պարտադիր հատկանիշներն են²:

Քարիտներ անեզական խմբանունից բացի՝ հայտնի է նաև դրա եզակի թվով ձևը՝ Քարիսը՝ որպես Հեփեստոսի կնոջ անուն³ (Հոմերոս, «Իլիական»): Իսկ Հեփեստոսի կինը, ինչպես գիտենք, ինքը՝ Ափրոդիտեն է: Այս համաբանվածքում ակնհայտ է դառնում, որ Քարիտները բազմակիացված Ափրոդիտեն են և, ըստ էության, խորհրդանշում են նրա հիմնական հատկանիշների փունջը:

Թեպետ սակավաթիվ, սակայն ակներև պաշտամունքային բնույթի տեղանուններ են՝ կապված Քարիտների խմբանվան հետ, օրինակ՝ Քարիտոն Լոփոսը՝ «Քարիտների բլուրը» (Հերոդոտոս)՝ Լիբիայում: Ափրոդիտեի մականուններից մեկը հենց Լիբանիտիսն⁴ է՝ Աֆրիկայի հյուսիսում գտնվող նրա տաճարի անունով: Արդյո՞ք խոսքն այստեղ հենց «Քարիտների բլուրի» սրբավայրին չի վերաբերում: Կիկլադյան Պարոս կղզում Քարիտներին նվիրաբերված պաշտամունքային վայր է գոյություն ունեցել: Ապոլոդորը հաղորդում է, որ այդտեղ Քարիտներին զոհաբերություն կատարելիս Կրետեի արքա Մինոսը, ստանալով աթենացիների ձեռքով դավադրաբար սպանված որդու՝ Անդրոգեոսի մահվան բոթը և գետին նետելով գլխի ծիսական պսակը, սրնգահարներին նվազը դադարեցնելու նշան է արել: Այդ ժամանակից ի վեր Պարոս կղզում զոհ են մատուցում առանց պսակի ու երաժշտության⁵:

Քարիս (անռական հոլովով՝ քարիտոս) հասարակ վերացական գոյա-

¹ Տե՛ս «Lexicon der Antike», Leipzig, 1979, էջ 113:

² Տե՛ս **Аполлодор**. Мифологическая Библиотека. М., 1972, 6, էջ 126:

³ Տե՛ս **Дворецкий И. Х.** Древнегреческо-русский словарь. М., 1958, էջ 1766:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 1026:

⁵ Տե՛ս **Аполлодор**. Указ. соч., էջ 74:

կանը լատիներեն թարգմանվում է ծագումով միևնույն հնդեվրոպական i-ական *ǵher-i- հիմքին հանգող gratia (սեռական հոլովով gratiae) բազմիմաստ բառով՝ «նրբագեղություն, գրավչություն, բարեհաճություն, բարեգործություն, փառք, շնորհ, պատիվ, պարգև, երանություն և այլն»: Համապատասխանաբար՝ Քարիտներ դիցուհիները կոչվում են այդ բառի հոգնակի թվաձևով՝ որպես անեզական գոյական Gratiae, և արդեն Հորացիոսի պոեզիայում նրանք Վենուսի ուղեկցուհիներն են:

Քարիսը ծագում է չափած «խնդալ, հրճվել, փառաբանել» (հրամայական եզակի՝ չափած «ուրախ լեր», չափած Διοσ υίε՝ «փառք քեզ, Ջևսի որդի») բայից, որին և որից աճած բառադաշտին (ածանցյալներին) հունարենի ստուգաբանական բառարանում մոտ երեք էջ է տրամադրված⁶:

Այդ չափած բայի՝ որպես - *ի*- կազմիչով ներկա ժամանակ ներկայացնողի հետ համեմատում են հ. հնդկ. haryati «զվարճանալ, հաճույք զգալ» բայը և վերականգնում դրանց համար *ǵhr-iō, *ǵher-ie-ti նախաձևերը: Համեմատությունների այդ շարքում դրվում են նաև իտալյան լեզուներից ունբրերենի heries ապառնի ժամանակաձևը (երկրորդ դեմքի եզակի թվով), որը լատիներեն թարգմանվում է «voles», և հին լատիներեն՝ horitur, hortor-ը: Սակայն այդպիսի ստուգաբանությունը կասկած է առաջացնում. հայ բառարանագիրները ենթադրում են, որ լատինական hortor-ը փոխառված է հայերեն *հորդոր*-ից⁷: Փաստորեն լատ. gratia-ն չունի հուն. չափած -ին համապատասխանող բայ, սակայն լատիներենում պատճենում է չարից գոյականը՝ նրա իմաստային բոլոր նրբերանգներով: Դեռ ավելին՝ վերջնահանգ երկար ā-ով աբլատիվուս հոլովի եզակի թվաձևը՝ gratiā-ն, թեպետ բառարանը կոչում է praep. cum gen. սակայն հազվադեպ է գործածվում որպես նախադիր կապ: Հիմնականում այն հանդիպում է հետադիր կապի կարգավիճակում. հմմտ. gratiā patris «հանուն հոր», բայց verbi gratiā «խոսքի համար», exempli gratiā «օրինակի համար»: Հնացած gratilis ձևը համարժեք է gratis «ծրի, անվճար, անհատույց» մակբային. հմմտ. gratis constat «ոչինչ չարժի», facere aliquid gratis «որևէ բան անել անհատույց, ծրի»: Մակբայական գործածությամբ այս բառերը զուգադրվում են հունարեն χάρις մակբային, որը χάρις գոյականի հայցական հնացած հոլովաձևն է, և հայերեն **ծրի** մակբային, որի ծագումը նույն հնդեվրոպական արմատից է⁸:

Հայերենում ունենք **ծիր, ծրի, ծրից** «նվեր, ընծա, պարգև, շնորհ, անհատույց տուրք» գոյականը, որ թարգմանվում է հունարեն χάρις, լատիներեն donum, gratia բառերով: Նույն արմատից ունենք **ծիրեն / ծրել / ձերել** «ծրի տալ, ծրի բաշխել, պարգևել, շնորհել» իմաստներով բայը, որն իր իմաստով մոտ է «ուրախություն պատճառել, ուրախանալ, հաճույք, երանություն զգալ» իմաստներին: **Ձրի** մակբայը, որ համարվել է **ծիր** գոյակա-

⁶ Տե՛ս Frisk J. GEW, Heidelberg, 2006, էջ 1062, 1065:

⁷ Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Վենետիկ, 1837, հ. 2, էջ 372, հմմտ. նաև՝ **Ջր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. III, էջ 407-408 («Նոր բառգիրք հայկազեան լեզուի» հայերենից փոխառյալ է համարում լտ. hortor «զրգռել, դրդել, հորդորել», hortamen, adhortatio «զրգռումն, յորդորումն», որոնց նմանությունը պատահական է»):

⁸ Տե՛ս **Ջր. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 154, 158, 161, նաև **H. Hübschmann**, Armenische Grammatik, Leipsig, 1897, էջ 407:

նի սեռական հոլովածևից առաջացած, թարգմանվել է *dorean, gratis, immerito* բառերով: Այս հայերեն բառերը տարբեր ստուգաբանական բառարաններում զուգադրվում են լատինական և հունական *χαίρω* - ձերեն, *χάρις* - *gratia* - ձիրք, *χάριον* - *gratis* - ձրի բառերի հետ՝ շնորհիվ Յուրբշմանի ստուգաբանության: Թեպետև Հայկազյան բառարանի բերած նմուշները ցույց են տալիս, որ դրանք վաղուց են ընկալվել իբրև նույնական բառեր՝ եթե ոչ միասնական ծագում, ապա գոնե իմաստային համապատասխանություններ ունեցող: Աճառյանը նշում է, որ **ձիր**-ը բնիկ հայ բառ է հնդեվրոպական **gher* արմատից, և նրան համեմատելի է հուն. *χάρις* «շնորհ, վարձատրություն» նշանակությամբ բառը, և **ձրի**-ն համեմատում է *gratus* «ախորժելի» ածականի, *gratia* «շնորհք» գոյականի, *gratis* «ձրի» մակբայի հետ⁹:

Այստեղ կարևոր է հիշել նաև հայերեն **ձրի** մակբային զուգադրվող -ո- հիմքակազմիչով մակբայը գերմանական լեզուներում. հմմտ.՝ հբգ. *gern*, ինչպես նաև, հունական *χάρτος*-ին համարժեք թոխարերեն B-ում *Karste*՝ **ǵhrtio*-ից, հայցական հոլովով *krent*՝ **ǵhrent*-ից, որին համապատասխանում է *χάρις* հունարեն բառը՝ «լավ, բարի»¹⁰:

Այսպիսով, ունենք հունարեն *χάρις*, լատին. *gratia*, հայերեն *ձիր* բառերը, որոնք համեմատելի են իրենց իմաստով՝ «ներագեղություն, շնորհ, պարգև», և դրանից էլ ծագող՝ «հաճույք, երանություն առաջացնելու տաղանդ»: Հունական դիցաբանության մեջ հատուկ տեղ ունեցող Քարիտները մարդկանց խմբերի միջև, ինչպես նաև մարդկանց և գերբնական ուժերի միջև կապ հաստատելու առանձնահատկությամբ օժտված դիցուհիներ են: Լատինական մշակույթը, որ հունական դիցաբանությունը յուրացնելու ավանդույթն ուներ՝ փոխելով և իր լեզվին հարմարեցնելով դիցանունները, այստեղ կատարում է ծագումնաբանորեն օրգանական թարգմանություն՝ Քարիտներին կոչելով *Gratiae*: Այդ դիցուհիների անունը հայերեն թարգմանում են *Գեղուհիներ, Շնորհներ*, մինչդեռ հետևելով լատինական օրինակին՝ կարող ենք անվանել ծագումնաբանորեն նույնական *Ձիրք* բառով: Հայերեն **ձրի** մակբայը դժվար թե սեռական հոլովածևի հետևանք է, այն թվում է ավելի նախնական, քան **ձիր** գոյականը: **Ձրի**-ն համապատասխանում է *χάριον* մակբային «հանուն, համար, պատճառով, հաճույքի համար»¹¹, որը, ինչպես արդեն ասել ենք, *χάρις* բառի հայցական հոլովի ավելի հին մակբայաբար գործածվող ձևն է. հմմտ. *μνημης χάριον* «հիշատակի համար», *παράδειγματος χάριον* «օրինակի համար», լատիններենում՝ *exempli gratiā*: Մակբայների և մակբայաբար գործածվող հոլովված գոյականների շարքին ավելացնենք գերմաներեն *gern* «հաճույքով» և թոխարերեն B-ի *Krent* հայցական հոլովածևը:

«Պարգև, նվեր, շնորհ» հասկացության հետագա հետազոտության համար հարկ կլինի դիտարկել բալթյան և սլավոնական լեզուների տվյալները ևս: Ակնառու է մի բան, որ հնագույն ժամանակներից ցանկալի նվի-

⁹ Տե՛ս **Յր. Աճառյան**, ՀԱԲ, III, էջ 153-154:

¹⁰ Տե՛ս **Pfeifer W.** *Etymologisches Wörterbuch der Deutschen*, Berlin 1989, I, էջ 549-550: **Kluge Fr.**, *Etymologisches Wörterbuch der Deutschen Sprache*, Berlin, New York, 1975, էջ 250:

¹¹ Տե՛ս **Дворецкий И. X.**, նշվ. աշխ., էջ 1766:

րատվության, անհատույց օգնության և դրա միջոցով երանության մթնոլորտի բարոյական խնդիրը ծիսական հատուկ կառույց է ունեցել Հին աշխարհում, և դրա վկայությունն է տվյալ դիցախմբանունը:

Բանալի բառեր - քարիս, սրբավայր, ձիրք, Պեյթո, Պարոս, Օլիմպոս, Թեոգոնիա, ձրի, Ափրոդիտե, Անդրոգեոս

ЦОВИНАР АРУТЮНЯН – Греч. *Χαριτες* – арм. *Ձիրք*. – Название греческой божественной триады **Χαριτες** pl.t. (от **χαρις** “радость, удовольствие, милосердие, благодать”) по сей день переводится на латынь этимологически тождественным именем **Gratiae** pl.t. (от **gratia** “привлекательность, прелесть, милость, снисхождение, благодать”). Другие переводы неизвестны: все языки используют либо греческий, либо латинский вариант этих имён.

Рассматривая различные исследования, раскрывающие мифологическую, смысловую и этимологическую сущность этих имён-дублетов, а также особенности адвербиального использования их падежных форм в Accus. и Abl. и в этом контексте сравнивая с ними армянское существительное ձիր (“дар, подарок, милость, благодать”) и соответствующее наречие ձրի (“в дар, бесплатно, даром”), автор считает допустимым перевод греч. *Χαριτες* pl.t. на армянский язык именем *Ձիրք* pl.t. (“talent, творческий дар”).

Ключевые слова: *Харита, святилище, дар, Пето, Парос, Олимп, Теогония, даром, Афродита, Андрoгeй*

TSOVINAR HARUTYUNYAN – Greek *Χαριτες* – Armenian *Ձիրք*. –The name of three Graces **Χαριτες** pl. t. (the plural form of **χαρις** “beauty, delight, blossom”) by now has been translated into Latin as **Gratiae** pl.t. (the plural form of **gratia** “attractiveness, gratefulness, grace”) and refers to the names of goddesses in Greek and Latin. Other languages also use these names.

This article presents a study based on several etymological analyses of the nouns **χαρις** and **gratia**, and particularly, the adverbial use of their ablative cases. In this regard, drawing etymological parallels with their Armenian equivalents ձիր (noun) “donation, gift, favour, bliss” and ձրի (adverb) “donate, for free, gratis”, we assume that the word *Ձիրք* pl.t. “talent, gift”, which is the plural form of the Armenian word ձիր, is the Armenian equivalent of the names of the goddesses mentioned above.

Key words – *charm, sanctuary, talent, Peytho, Paros, Olymp, Theogonia, gratis, Venus, Androgeos*